



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 մարտի 2023 թվականի N 138 -Ա

**«ԼԵՌՆԱԶՈՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԾՈՎԻՆԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԶՎՃԱՐՎՈՂ
ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ
ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉՈՒՎԻ ԳՐԵՏԱ ԱՂԱՍԱՐՅԱՆԻՆ
ՎԵՐԱՊԱՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով «Լեռնաձորի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ծ. Գրիգորյանի դիմումը՝

ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. «Լեռնաձորի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ծովինար Գրիգորյանին 2023 թվականի մարտի 29-ին տրամադրել չվճարվող արձակուրդ:

2. Տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն ՊՈԱԿ-ի ուսուցչուհի Գրետա Աղասարյանին:

29.03.2023

X

ՂՈՒԿԱՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ

Подписано: GHUKASYAN ROBERT 3712800290

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

ՂՈՒԿԱՍՅԱՆ

2023թ. մարտի 29
ք. Կապան

